

ISSUES BASED ON CREATION OF FINANCIAL SOURCES OF INNOVATION PROCEDURES

*V. H. Arakelyan
H. H. Sukiasyan
A. H. Drnoyan
M. Zh. Simonyan*

Financial sources of innovation procedures are revealed and management basic issues of innovation is discussed.

**ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ՖԻՐՄԱՆԵՐԻ ԴԵՐԸ
ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ**

Վ. Հ. ԱՐԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Հ. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Հ. Ա. ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԳՊՀ դասախոս, ասիստենտ
Մ. Ժ. ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՊԵՀ ասպիրանտ

Վենչուրային ֆիրմաները իրենցից ներկայացնում են ժամանակավոր կազմակերպչական կառուցվածքներ, որոնք զբաղված են գիտական մտքերի մշակմամբ և նոր տեխնոլոգիաների և արտադրանքների վերածմամբ: Այդ ֆիրմաները ստեղծվում են փորձարկման և լրացուցիչ մշակման շնորհիվ՝ ռիսկային նորամուծությունները հասցնելու մինչև արդյունաբերական իրացման:

Ժամանակակից փոքր վենչուրային կազմակերպություններն իրենցից ներկայացնում են ճկուն և շարժուն կառուցվածքներ, որոնք տարբերվում են առավել բարձր նպատակամետության: Դա բացատրվում է նրանով, որ ինչպես կազմակերպության աշխատակիցները, այնպես էլ ներդրողներն անմիջականորեն շահագրգռված են արագ իրացնելու իրենց կողմից մշակված մտքերը, տեխնոլոգիաները, օբյեկտները, հայտնագործությունները՝ հնարավորինս նվազագույն ծախսերով: Վենչուրային ֆիրմաներն ստեղծվում են պայմանագրային հիմունքներով դրամական միջոցների հավաքագրման և, որպես կանոն, մի քանի իրավաբանական կամ ֆիզիկական անձանց (կամ երկուսը միասին), կամ էլ խոշոր ընկերությունների, բանկերի, անձնական միջոցների և պետության կողմից ներդրումների ու վարկերի տրամադրման շնորհիվ: Ներդրումները ֆիրմային տրամադրում են անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ դրանք նրա կանոնադրական կապիտալում ներդնելու միջոցով: Դրա դիմաց մասնակիցներն ստանում են նախապես պայմանավորված բաժինը ֆիրմայի սեփական կապիտալից, որը նա տնօրինում է մինչև այն պահը, երբ կվաճառի այն և կստանա շահույթ:

Հարկ է նշել, որ երկարաժամկետ ներդրումները կատարվում են ոչ միայն դրամական տեսքով, այլև մանր և միջին ֆիրմաներին կոնկրետ օգնություն ցուցաբերելով, որը կխթանի նրանց խոշոր ընկերության վերածվելը: Վենչուրային կապիտալը բարձր ռիսկայնություն ունենալու պատճառով ունի ավելի բարձր տոկոսադրույք՝ տարեկան 25-35 տոկոս:

Վենչուրային կապիտալը կարելի է բաժանել երեք հիմնական խմբերի՝ սկզբնական ներդրումներ, ընկերության զարգացման ընթացքում կատարվող ներդրումներ, որոշակի գործունեության համար նախատեսված ներդրումներ: Սկզբնական ներդրումներն առավել ռիսկային են համարվում: Հաճախ դրանք բաժանվում են երկու ենթախմբերի՝ նախասկզբնական և սկզբնական ֆինանսավորման:

Նախասկզբնական ֆինանսավորումը վերաբերվում է ձեռնարկատիրական գործունեության սկզբնական փուլին՝ մինչև վենչուրային ֆիրմայի ամբողջական ձևավորումը (օրինակ՝ շուկայի ուսումնասիրության համար տրված ֆինանսավորումը կամ ֆրենչայզիզի պայմանագրի կնքման համար կատարված ներդրումները և այլն):

Սկզբնական ֆինանսավորման ժամանակ ֆիրման ֆինանսական միջոցները ներգրավում է արտադրական գործունեություն սկսելու նպատակով, քանի որ արդեն որոշված են ընկերության գործունեության տեսակը, աշխատակիցները և պարզ են շուկայի ուսումնասիրության արդյունքները: Սակայն ռիսկի մակարդակն այստեղ բարձր է, քանի որ կատարված ներդրումները սովորաբար իրենց արդարացնում են ոչ շուտ, քան 5-10 տարվա ընթացքում:

Զարգացման փուլի ֆինանսավորումը իր հերթին բաժանվում է երկու տարատեսակների՝ նախնական փուլի ֆինանսավորում և ավելի ուշ փուլի ֆինանսավորում:

Նախնական փուլի ֆինանսավորումը նախատեսված է ոչ մեծ ֆիրմաներին օժանդակելու համար: Որպես կանոն՝ սնան տիպի ֆիրմաները չեն կարող ֆինանսավորել առաջընթացն ի հաշիվ վարկավորման, քանի որ նրանք չեն կարող երաշխավորել վարկի վերադարձը: Ռիսկի գործոնն այստեղ ավելի ցածր է, քան սկզբնական ներդրումային փուլում: Հաճախ այս կարգի ֆինանսավորման են դիմում այնպիսի ֆիրմաները, որոնք մոտ երեք տարվա ընթացքում ծավալում են իրենց գործունեությունը, սակայն դեռ շահույթ չեն ստանում:

Ավելի ուշ փուլի ֆինանսավորումն իրականացվում է առաջընթացի մեծ ներուժ ունեցող ֆիրմաներում: Այստեղ ֆինանսավորումն իրականացվում է նորամուծության կամ ավելի լավ արդյունքի հասնելու նպատակով: Ռիսկի գործոնն այստեղ ավելի փոքր է՝ համեմատած նախորդ փուլերի հետ: Սակայն այստեղ ֆիրման ունի երկընտրանք՝ դասական վարկավորման և վենչուրային ֆինանսավորման միջև:

Ինչ վերաբերվում է որոշակի գործունեության համար նախատեսված ֆինանսավորմանը, ապա այն իրականացվում է որպես մեկ միասնական գործողություն: Այստեղ, որպես կանոն, անհրաժեշտ միջոցները տրամադրվում են կարճ ժամանակահատվածով: Վենչուրային ներդրումներն իրականացվում են կազմավորված ֆոնդերի միջոցով, որոնք ղեկավարվում են տվյալ ֆիրմայի ղեկավարների կողմից: Այդ ֆոնդերը կարող են անկախ լինել կամ էլ պատկանել որևէ

ֆինանսական կառույցի, սակայն պետք է հանդես գան որպես անկախ միավորներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վենչուրները լայն տարածում են ստացել տնտեսության գիտատար ճյուղերում, որտեղ նրանք մասնագիտանում են գիտական հետազոտություններ և ճարտարագիտական մշակումներ անցկացնելու մեջ՝ ելնելով այն բանից, որ ժամանակակից պայմաններում գիտական հետազոտությունների և մշակումների ոլորտում մեծացել է փոքր բիզնեսի դերը: Դա պայմանավորված է նրանով, որ գիտատեխնիկական հեղափոխությունը փոքր ու միջին ներդրումային և բարձր տեխնոլոգիական ֆիրմաներին տվել է ժամանակակից տեխնիկա՝ նրանց չափերին համապատասխան՝ հնարավորություն ընձեռնելով իրականացնել մշակումներ և ապահովել արտադրության բարձր տեխնիկական մակարդակը հնարավորինս փոքր ծախսերով:

Ուստի շատ խոշոր ընկերություններ, ունենալով թանկարժեք սարքավորում և հաստատուն տեղ շուկայում, ոչ միշտ են իրականացնում արտադրության վերակառուցման և տարբեր բնույթի փորձարարություն, հետևաբար, նրանց ավելի շահավետ է ֆինանսավորել փոքր վենչուրային ֆիրմաներին և հաջողության դեպքում շարունակել առաջընթացն այդ ճանապարհով:

Այսպիսով, վենչուրային բիզնեսը՝

- հանգեցնում է ստեղծելու ներկենսունակ տնտեսական միավոր, որը, ներգործելով գիտական հետազոտություններ իրականացնող ավանդական կառույցների վրա, հանգեցնում է ֆիրմաների արտադրական կառուցվածքների փոփոխության,

- ավելացնում է բարձրորակ մասնագետների զբաղվածության մակարդակը,

- ստիպում է խոշոր ընկերություններին կատարելագործելու կառավարման սկզբունքները և կազմակերպչական կառուցվածքները,

- հնարավորություն է ընձեռնում ձևավորելու հատուկ ֆինանսավարկային համակարգ՝ վենչուրային կապիտալի տեսքով:

Հարկ է նշել, որ «վենչուրային կապիտալ» և «վենչուրային բիզնես» տերմիններն առաջացել են անգլերեն «venture» բառից, որն էլ թարգմանաբար նշանակում է «ռիսկային սկիզբ» կամ «ռիսկային ձեռնարկում», «սպեկուլյացիա»: Այս բառը և նրանով կազմված բառակապակցություններն ԱՄՆ-ում սկսել են լայնորեն գործածվել 20-րդ դարի 80-ական թվականներից սկսած, որը և շատ բնական է այն առումով, որ ոչ լրիվ զարգացած շուկայական հարաբերություններում յուրաքանչյուր ձեռնարկատիրական գործառույթ, այն էլ՝ ներդրում, շատ ռիսկային է:

Վենչուրային կապիտալի ամերիկյան մոդելն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից ամենակարևորները երկուսն են: Առաջին առանձնահատկությունն այն է, որ վենչուրային ֆինանսավորման դեպքում անհրաժեշտ միջոցները ֆիրմային տրամադրվում են առանց որևէ ակտիվի երաշխավորության: Այստեղ որպես երաշխիք հանդես է գալիս ներդրողի որոշակի բաժինը բաժնետիրական կապիտալում: Ներդրողը յուրաքանչյուր պահի կարող է վաճառել բաժնետոմսերը և ստանալ շահույթ, իհարկե, եթե տվյալ ֆիրման ապահովում է շահույթ: Իսկ ընկերության սնանկացման դեպքում ներդրողը միայն կարող է

վերցնել նրա ակտիվների մի մասը: Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ տվյալ դեպքում ներդրողը ձեռներեցի հետ միասին դիմում է շատ մեծ ռիսկի: Այսպիսի ֆինանսավորման կարիք սովորաբար զգում են սկսնակ կամ փոքր ձեռներեցները, ճարտարագետներն ու գիտնականները, որոնք ունեն նորարարության ունակություն և գաղափարներ, սակայն չունեն անհրաժեշտ միջոցներ, իսկ բանկից միջոցներ ներգրավելը նրանց համար իրատեսական չէ:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ վենչուրային ֆոնդերը պատրաստ են ֆինանսավորել նոր գիտատեխնիկական ծրագրերը, նույնիսկ այն դեպքում, երբ այստեղ առկա է շատ մեծ ռիսկի գործոնը: Այս ամենի պատճառն այն է, որ ներդրողները ձգտում են ստանալ առավելագույն շահույթ, քանզի ներդրումները բարձր տեխնոլոգիաներում և գիտատեխնիկական նորարարություններում դա ապահովում են: Վերջին տարիներին մեծ տեղ են զբաղեցնում օպերացիոն համակարգերում և ծրագրավորման բնագավառում կատարվող ներդրումները:

Սրա վառ օրինակ է «Microsoft» ընկերությունը, որն ստեղծվել է երկու տասնամյակ առաջ՝ 19-ամյա Բիլ Գեյթսի կողմից և ամբողջ աշխարհում հայտնի DOS և WINDOWS օպերացիոն համակարգով:

Ռիսկային կապիտալը և ներդրումները գիտատեխնիկական առաջընթացում ընդհանուր առմամբ անվանվում են վենչուրային կապիտալ: Ժամանակի ընթացքում Կենտրոնական և Արևելեյան Եվրոպայի հետխորհրդային երկրներում դրանք դառնում են առավել կարևոր տնտեսական գործիք: Վենչուրային կապիտալը հիմնականում օգտագործվում է արագ զարգացող ֆիրմաների գործունեությունը ֆինանսավորելու համար, քանի որ այն շատ կարևոր դեր է խաղում արտադրության մրցունակության ապահովման գործում: Ուստի պատահական չէ այն փաստը, որ վենչուրային ֆինանսավորմամբ զարգացած շուկա ունեցող երկրները բարձր տեխնոլոգիաներ արտահանող խոշորագույն երկրներ են: Դրանց շարքին են դասվում ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Գերմանիան, Ճապոնիան և այլն:

Ինչ վերաբերվում է Ռուսաստանի Դաշնությունում գոյություն ունեցող վենչուրային ֆիրմաներին, ապա դրանք ունեն երկու կազմակերպչական ձև.

1. Ինքնուրույն վենչուրային ֆիրմաներ,
2. վենչուրային ֆիրմաներ, որոնք մտնում են խոշոր ձեռնարկությունների կազմի մեջ:

Ներդրողներն իրավունք ունեն ստանալ շահույթ ֆինանսավորող ֆիրմաներից, իսկ միջոցները տրամադրվում են երկարաժամկետ և անվերադարձ հիմունքներով, ուստի որոշ դեպքերում նրանք սպասում են 3-5 տարի, որպեսզի համոզվեն ներդրումների հեռանկարայնության մեջ: Ներդրողներն ակտիվորեն մասնակցում են ֆինանսավորվող ֆիրմայի կառավարմանը, քանի որ առանձնապես շահագրգռված են վենչուրային ձեռնարկության հաջողություններով: Այդ պատճառով ռիսկային ներդրողները հաճախ չեն սահմանափակվում դրամական միջոցների տրամադրմամբ, այլ մատուցում են կառավարչական, խորհրդատվական և այլ գործարար ծառայություններ վենչուրային ֆիրմային, սակայն չեն միջամտում նրա գործունեության օպերատիվ ղեկավարմանը:

Ներքին վենչուրի ստեղծման որոշումը կայացվում է ձեռնարկության ղեկավարության կողմից, իսկ գործունեությունը վերահսկվում է ղեկավարներից մեկի

կողմից: Մտքերի ընտրության ժամանակ, որի հիմքի վրա հնարավոր է ստեղծել «ռիսկային» գիտատար նախագիծ, անհրաժեշտ է հաշվի առնել երկու կարևոր հանգամանք.

- առաջին՝ այդ նախագծի խնդիրները չպետք է համընկնեն մայր ընկերության ավանդական շահերի հետ, այսինքն՝ ներքին վեճուրի նպատակն է որոնել նորամուծություններ,


- երկրորդ՝ մտքերի ընտրության ժամանակ, որոնք պետք է իրացվեն ներքին վեճուրի սահմաններում, փորձագետները պետք է համոզված լինեն, որ նորամուծության առևտրային կարողությունը, ստեղծման արտադրական և առաքման ծախսերը հնարավոր է կանխատեսել 50-ից մինչև 75% ճշգրտությամբ:

Ներքին վեճուրներին, որպես կանոն, տրամադրում են իրավաբանական և բյուջետային ինքնուրույնություն: Ամենամեծ ինքնուրույնություն ունեցողներին հատկացվում են առանձին շենքեր: Մայր ընկերությունը նրանց ապահովում է գիտահետազոտական, հաշվողական և այլ սարքավորումներով, տրամադրում անհրաժեշտ ծառայություններ կառավարման ոլորտում:

Աշխատանքների ավարտից հետո, որոնց համար ստեղծված են վեճուրային ֆիրմաները, վերջիններս դադարեցնում են իրենց գործունեությունը կամ էլ կլանվում որևէ հիմնադրի (խոշոր ֆիրմայի) կողմից, կամ ինքնուրույն դուրս են գալիս շուկա՝ բարենպաստ առևտրային իրավիճակ ունենալով մրցակիցների նկատմամբ՝ նախագծերի վաճառքի առումով և հնարավորություն ստանում ընդլայնել ձեռնարկատիրական գործունեությունը:

Սովորաբար, ներքին վեճուրի արդյունավետ գործունեությունից ելնելով, այն վերածվում է մայր ընկերության արտադրական ստորաբաժանումներից մեկի, իսկ արտադրանքն իրացվում է կազմակերպության կողմից ձևավորված առաքման ուղիներով:

Ժամանակակից պայմաններում վեճուրային ֆիրմաները նորամուծությունների կարևոր աղբյուր են: Այդպիսի կազմակերպությունների ստեղծման համար անհրաժեշտ են հետևյալ բաղադրիչները (գծանկար 1):



Գծանկար 1. Վեճուրային բաղադրիչները

Շատ ընկերություններ միաժամանակ կազմակերպում են մի քանի ներքին վեճերներ (այդպիսի օրինակ կարող է ծառայել IBM կորպորացիան, որը 1983թ ուներ 15 «ռիսկային» նախագիծ): Նրանց հիմքի վրա մշակվել, արտադրվել, դուրս են բերվել շուկա այնպիսի արտադրատեսակներ, ինչպիսիք են հեռուստահաղորդակցության սարքավորումները, նոր տեսակի դիսփլեյները, անհատական համակարգիչները, որոնց ստեղծումը և թողարկումը IBM-ներքին վեճերների ամենահաջողված նախագծերից են: Այդ նախագծերի իրականացումից հասույթը կազմեց 2.5 մլրդ դոլար, որի շնորհիվ ներքին վեճերը վերածվեց կորպորացիայի խոշորագույն արտադրական ստորաբաժանման:

Չարկ է նշել, որ մեր հանրապետությունում վեճերային ֆիրմաները գտնվում են ձևավորման սկզբնական փուլում:

ԳՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *П. Ф. Дракер*, Инновация и предпринимательство. М., 1992
2. Инновационный менеджмент. М., ИИСН, 1998
3. *Б. Саяга*, Инновация как средство экономического развития, М., Прогресс, 1990

РОЛЬ ВЕНЧУРНЫХ ФИРМ В ИННОВАЦИОННОМ УПРАВЛЕНИИ

*В. О. Аракелян
О. Г. Сукьясян
А. А. Маргарян
М. Ж. Симонян*

В статье обсуждается роль венчурных фирм в процедуре разработки инновационной стратегии.

THE ROLE OF VENTURE FIRMS IN INNOVATION MANAGEMENT

*V. H. Arakelyan
H. H. Sukiasyan
H. A. Margaryan
M. Zh. Simonyan*

In the article the role of venture firms is being discussed in procedure of innovation strategy development.